# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԵՐԱԽՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՍՌՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՆԵՐԱԼԻՍՍԻՄՈՒՍ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ

*Հայաստանյայց Եկեղեցու Համազգային Ժողովի պատգամավորներս ավարտելով մեր աշխատանքները, հաճույքն ու պատիվն ունենք հայտնելու Ձեզ մեր սրտագին երախտագիտությունը։ Սովետական Միության մեզ տրված դյուրություններով մենք հնարավորություն ունեցանք կատարյալ համերաշխությամբ և միաձայնությամբ ընտրելու Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Տեր Գեվորգ արքեպիսկոպոս Չեորեքչյանին։*

*Հայրենասիրական զգացմունքով և գիտակցությամբ մեր անկեղծ ուրախությունն ենք հայտնում տեսնելով մեր Հայրենիքի կուլտուրական և տնտեսական վերելքը, որ վեր է բոլոր ակնկալություններից։*

*Ցնայելով վերջին տարիների ահավոր պատերազմին, որ բնականաբար, երկրի ուժերը պիտի լարեր պատերազմական պահանջներին գոհացում տալու համար, տեսնում ենք, որ Հայաստանն ընթացել ու ընթանում է հարաճուն զարգացման ճանապարհով։ Մենք տեսնում ենք Հայաստանում արտադրական, գիտական, կուլտուրական, գեղարվեստական և այլ հաստատություններ ու հիմնարկներ։ Մենք տեսնում ենք երբեմնի անապատ հողերն այժմ ծաղկած ու մշակված ոռոգման մեծ աշխատանքներով, և անհուն է մեր հրճվանքն ու հիացմունքը մեր ժողովրդական ու պետական կյանքի վերելքը տեսնելով։ Մենք խորապես գիտակցում ենք, որ այս բոլորը հնարավոր է այն պատճառով, որ մեր ժողովուրդն էլ մեծ բարեբախտություն ունի Սովետական Միության մեկ անդամը լինելու, վայելելով Ձեր հայրական խնամքն ու բարյացակամ ուշադրությունը։*

*«Մենք մեծ հույս ունենք, որ Սովետական Միության պետական և քաղաքագիտական իմաստությունը կգտնի նաև միջոց ու ճանապարհ վերացնելու այն անարդարությունը, որին ենթարկվեց մեր ժողովուրդը առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում»։*

Ազգային եկեղեցական ժողովի Նախագահություն

*(«Սովետ. Հայաստան», հուլիս, 6, 1945 թ., № 134 (7387)*